

## ՀԱՅ — ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածինը և Հայաստանի սովոր զործ ոլ-  
Արմենակ Սիւնիի, տպագրուած է Տփիփս  
Էնֆրանեանցի ապարանում 1881 թ:

Մեր մէջ էլ կան մարդիկ, որոնք ամենայն սրտով ցանկանումեն տես-  
նել հայ — գրականութիւնը զարգացած, ծաղկած, և նոյն հոգով էլ  
գործումնեն ևս էլ հաւատումեմ, որ մեր գրականութիւնը այդ տեսակ  
սրտանուէր մարդիկ շատ ունի՝ ես, դու, նա, միւսը . . . . . բայց  
եթէ նա մեղ չունենար, մենք էլ իրան չէինք ունենալ. և այն ժամա-  
նակ մնան բարե հայութիւն . . . .

Բայց մարդիկ մի ուզդութեամբ չեն կրթուած, մի սիրու, մի հոգի,  
միանման խելք, ուսում, զիտութիւն չունեն, որ մի կերպ էլ ասեն,  
խօսեն, դատեն, գրեն . . . Աւրեմն՝ մարդկանց խելքի ու զարգաց-  
ման մէջ էլ կայ տարբերութիւն. ամեն մէկը իր անհատական հայեացք-  
ները բացառապէս ունի. պարզ ասենք, մարդիկն անհատներ են, քա-  
նի մարդ, այնքան տեսակ էլ խելք կայ . . .

Եթէ արդարե այսպէս է, ապա մեր գրականութիւնը սիրողները մը-  
տաւորապէս անհաւասարակշիռ մարդիկ են, ցանկանումեն տեսնել նո-  
րան ծաղկած վիճակի մէջ, և որոնցից շատերը իրենց գրաւոր լուման էլ  
դան ծաղկած վիճակի մէջ, և որոնցից շատերը իրենց գրաւոր լուման էլ  
տութեանց հաղորդակից լինելու և թէ գրականութիւնը ծաղկեցնելու  
սպատակով: Այս կէտում ահա սիրողներից ամեն մինը յայտնվումէ  
իւր բոլոր ուժերով, խելքով և ամեն գոյներով . . .

Բայց գրականութիւնը վերացական մարմին է՝ անձեռը, անոտք. նո-  
րան պէտք չեն դասագրքեր, վէպեր, բոմաններ, պատմագրեր, թատե-  
րագրեր և ոչ մինը. նա ոչ գովասանութեան է սպասում և ոչ խայտա-  
ռակութեան. եթէ լուս փոխարէն նորան վար կըտան՝ նա հազիւթէ մըր-  
ուակութեան. այսպէս «գլուխդ քարը, վար ևս տալիս, էլ դու կզշչա»: Քո  
մընջայ այսպէս. «գլուխդ քարը, վար ևս տալիս, էլ դու կզշչա»:

Այստեղից երեսումէ, որ գրականութիւնը իւր հասարակութեան մը-  
տաւոր զարգացման ամենաթափանցիկ հայելին է. նայի՞ր նորա մէջ և  
դու կըտեսնես քո հասարակութեան պատկերը: Աւրեմն՝ գրականութիւն  
ասածդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ ազգի յառաջադիմութիւն ցոյց տուող  
սահմանակետը, որի բարձրանալը, ինչպէս ասացինք, կախուած է Ֆան-  
իրեն սիրողների թուից և կրթութիւնից:

Այդ սիրողների կարգին է պատկանում իրը թէ «Էջմիածինը և Հա-  
յաստանի սովոր» գրքովի հեղինակ պ. Արմենակ Սիւնին, որ բարեհաճել  
է իւր երիտասարդութեան առաջին աշխատանքը նուիրել հայոց ազգին:

Նախ քան մենք մեր առելէր կասէինք Արմենակ Սիւնիի և իր գրբոյկի վրա, հարկաւոր ենք համարում մի նկատողութիւն անել մեր գրականութեան գրութեան մասին, ինկատի ունենալով Արմենակի պէս շատ ձեռքեր՝ որ գործումն յանուն գրականութեան և սրբազան պարտականութիւն դնում մեզ վրա մեր նկատողութիւնն անելու:

Հեղինակ պարոնները իւրեանց հրատարակելի գրքերի նախաբանը վերջացնումն վերջումն հնորած հոգոյի համաձայն. «տեսնենք Հայ—լրագրութիւնը ինչ կասի մեր գրքի մասին. պակաս—պուատիցն էլ ներողութիւն ենք խնդրում» . և վերջացաւ: Ստացվումն այդ գրքերը, կարգացվում, թողնումն ընթերցողի վրա լու թէ վատ տպաւորութիւն՝ նայած վերջինիս: Հոգեկան տրամադրութեան: Այնուհետեւ ընթերցողն էլ, լրագրութիւնն էլ լոելով ներումն, հեղինակի փափագին համաձայն . . . :

Նկատողութեան այս կետից հետեւումէ ասել, որ մեր մէջ գրական աշխատանքը գեռ չէ գնահատվում. խելահաս մարդիկ չեն մտրակում մորակելին, չեն գովում գովելին. ասես թէ նոր լոյս ընծայուած զրբի վրա նայումն ինչպէս հինգ կոսէկի կանաչու. Կեցցենք մենք, շատ ապրինք, որ այդպէս ծաղկեցնումն մեր գրականութիւնը . . . Խակ, տհաս, վնասակար և որ վատթարն է՝ պատիւ, անձնաւորութիւն շոշափող հրատարակութիւններ կարգալ, լոելեայն անցնել, ներել — կը նշանակէ՝ նպաստել այնպիսեաց բազմանալուն, աճելուն. կը նշանակէ՝ թունաւորել գրականութիւնը և նորա քննքուշ սիրով բեղմնաւորել սուր—սուր փշերով: որ ծակծկեն հօտ քաշողի քիթ ու պոռւնգը. կը նշանակէ՝ կատարելապէս անբարեացակամ՝ լինել հայ—գրականութեան . . . :

Բայց ինչի՞ մենք պէտք ենք: Միթէ չենք կարող լինել այնէն, ինչպէս որ չէ և պէտք անշուշտ լինեն: Սորա համար մեծ բան չէ հարկաւոր, ինչի՞ մեր բնաւորութիւնը, մեր յատկութիւնները—ուրիշ ոչինչ: Մենք մեր գրութեամբ, մեր գործունէութեամբ, մեր անտարբերութեամբ ոչ թէ նպաստումն գրականութեան ծաղկելուն, այլ ուղղակի անձնական նպատակների ենք ծառայում, յանուն գրականութեան մեր կիրքը յառաջ մղում և թոյլ տալիս այդպէս վարզելու ուրիշներին ևս: Յարգոյ, Պշակը, գովում և մինչեւ մպհամմազի եօթներողը երկինքն է հասցնում մի ամենախայտառակ դիրք, որ լոյս է տեսել վերջերում: ինչի՞ որովհետեւ այդպէս էր ձեռնտու նորա մեծանուն խմբագրին. մի ուրիշ պարոնի գրուածք էլ նորա աչքում փուշ է երևում, որբան էլ արժանաւոր գործ լիներ. ինչի՞ այդ ևս իր հաշիւն է: Նա իր հաշիւների մէջ շատ ծիշտ է և ամենայն զգաստութեամբ հետեւումէ անձնասիրական թէ անձնամոլական դաղափարին . . . Վիայն Պշակը չէ, որ այդպէս է. անաչառ ու բարեխիղճ մարդիկ մեր մէջ այնքան քիչ են, որ մատների ծայրով կարելի է թուել: Պասնաւոր մարդիկ՝ որ իրանք

իրանց համարում են գրականութեան ռեռ բարեկամներ, իւրեանց կամաւոր նկատողութեանց մէջ անգամ լունքնեռն են զրիշ շարժում. մինը միւսի շարժման առիթն է. մինը միւսի հակասութիւնն է կամ գովելի ճառախօսութիւնը. անձնաւորութիւն, կողմնասիրութիւն, խաթր, և և թշնամական կիրք — աչա մերոնց պայմանները քննադատելի գործը քննելիս և կամ գրելիս:

Մեր գրականութիւնը բարեխիղձ կրիտիկոսներ չունի. չունի, ասումեմ, ըստ որում՝ մեզանից ամեն մէկս մի մի պատկառելի անձնաւորութիւններ ենք. Ես—Ես եմ. դու—դու ես. նա էլ խօ—նա է . . .

«Ի՞նչ ես գրում, բարեկամ. — պատահմար հարցնումես մէկին.

— Ա, էպ:

Եւ այս լակոնիկ պատասխանատուն ոչ թէ միայն գրեց, այլ և հրատարակեց մի գրքոյկ, իր խօսքով, մի վէպ: Դորա մէջ ովքեր են հերոսները — մեղրամամից ձուլած մարզիկներ, երեղյթները անբնական: Խեղձը ուղումէ Նր էլլ նկարագրել, գուրս է բերում չինաստանցի ումիկը. ուղումէ մեր գիւղացուն երեան հանել իր վսեմ և թոյլ կերպարանքով, գուրս է գալիս ոռւսաստանցի մուժիկը . . .

«Ախր քեզ կը խայտառակեն հրապարակապէս » — գիմում ես հեղինակին:

— Բան չունես. ո՞վ է ինձ հետ ընկնողը . . .

Եւ մի՛թէ սուտ է, անհիմն է այդ սուր պատասխանը. առանց անձնական հաշուի ո՞վ ո՞ւմ հետ է ընկնում . . .

« Դու ի՞նչ ես գրում: Եղբայր ջան » :

— Ես էլ ստանաւորներ եմ շարագրում . . .

(Գրել: շարագրել: որքան մեծ տարբերութիւն . . . )

« Ո՞ւմ համար : »

— Քեզ ի՞նչ . . .

Եւ աչա այդ ստանաւորներն էլ տպուած ստանում, կարդումնք. սա էլ իր սազն է ածել, բայց քնարը ձանձրալի է, մեր սիրտը չէ թափանցում և լարերը շարժում. մենք սիրուհիներ չենք սիրում, պարոնը գրչի ծայրով ստիպումէ անշուշտ սիրել . . .

— Է՞չ, բան չունես. ո՞վ է հաշուետեսը, պատասխանումէ երկըորդ անգամ հարցմանդ:

« Դու ի՞նչ ես յօրինում, ազնիւ բարեկամ: »

— Աերեցէք, գաղտնիք է:

« Աւրեմն չը պէտքէ տպել տաք: »

— Ըատ շուտով. բայց ազգ — անունս փոխած:

« Երեկի խիստ էք գրում: »  
 — Ի՞նչ, մորակ է, ապտակ գրանց.....  
 « Ո՞ւմ: »  
 — Ակագլուխների . . .  
 « Բնչի՞: »  
 — Քեզ ի՞նչ:  
 Այս գաղտնիքն էլ ստացար: Կարգումես առաջին թերթի երեսը —  
 բայց Արմենի Սէւնէլ . . . . . Դարձեալ պատահմամբ հարցնումես  
 « Այ մարդ, ինչեր ես գրել միթե կարելի է այդ աստիճան զրպար-  
 տութեամբ հարուածել եցմիածնին . . .  
 — Վահ, միթե մարդս ազատ չէ: Ինչ կուզի, ինչ գիտի, այն էլ կը  
 դրի, պոծաւ գնաց . . .  
 « Ոչ, ազատ չէ: Կաշկանդուած է այդպիսի գեպերում: Երբ ձեռ-  
 նարկելի գործիցդ բարձր լինէիր, դարձեալ ազատ չէիր կարող լինել...  
 — Էհ, բան չունե՞ս, ուր է կաշկանդող ձեռքը: բաւական է, որ տա-  
 ռասիսալներ չը լինին էլի՛ . . . զիրքս գիրք է, ես էլ հեղինակ . . .  
 պոծաւ գնաց:

Այսպէս, աչա վայրաբան, տղայամիտ պարոնները՝ ո՛րը հեղինակի ա-  
 նուն վայելելու, ո՛րը կիրքը յագեցնելու, ո՛րը խօսքը տեղաց անելու,  
 ո՛րը լաւամարդի զառնալու, ո՞րն՝ ընկած՝ մի իր նմանի էլեկտրական ազ-  
 դեցութեան տակ՝ մեր գրականութիւնը լրագրութեան հետ կատարեալ  
 խայտառակութեան աստիճանի են մօտեցնում: Խթէ գարուս հայութիւնը  
 ծնած չը լինէր Աղայեանց, Պատկանեանց, Պռոշեանց, Բաֆֆի և այլ  
 մի քանի յայտնի անձինք, այն ժամանակ ինչի՛ նման կը լինէր մեր  
 գրականութիւնը: Մի կողմից այդպիսի տաղանդաւոր պարոնները իրենց  
 դրաւոր աշխատութեամբ զարկ են տալիս գրականութեան ծաղկելուն,  
 միւս կողմից յիմար, կրօսու ու անխելահաս պարոններ իրենց հրատա-  
 րակութեամբ հարուածում են նորա զարգացմանը, և միթե առաջին-  
 ները լիակատար իրաւունք չունեն բողոքելու այնպիսեաց գեմ: Ահա-  
 ւասիկ մեր ազգային բանաստեղծ Բաֆֆիի Պաւիթ բէզը, Նիւթը վսեմ  
 է, բաղմակողմանի և ազգային կեանքից առած: Մարդս բոպէն գնա-  
 հատելով կարդումէ նորա հատորները և քանի ընկնումէ խորքերը, այն-  
 քան բաղմակողմանի աղդեցիկ տպաւորութիւնների գրեթէ գերի է  
 գառնում . . . . Պաւիթ բէզ կազմող զրիչը այնպէս է յօրինել նորան  
 և յօրինումէ, որ մի բոպէի ընթերցումը մարդիս հոգու և սրտի լարե-  
 րին զիպչելով՝ վշտաւոր մուսաներին յատուկ սգաւոր ձայների զօղան-  
 ջումներ է դուրս բերում: միւս բոպէն՝ ընդհակառակը, նոր ուժ ու զօ-  
 րութիւն, նոր աշխայժ ու թարմութիւն մատակարարում: . . . Մեր ազ-  
 գային առանձնայատկութիւնները, մեր հոգեորականն ու աշխարհա-  
 կանը, մեր իշխաններն ու բեգերը, մեր կտրիչներն ու թամրալները,

մեր ազատամիտներն ու վախլուկները, մի խօսքով, մեր ամենայն ո՞վ և ինչ ո՞վ բաֆֆին թարմ յիշողութեամբ դուրս է բերել այնպէս ինչպէս միշտ և ամեն վայրկենում նրանց տեսնումմենք սեփհական աշքերով մեզ մօտ, մեր հողի վրա մանդալիս, մեզ հետ խօսելիս, գործելիս, վիճելիս . . . Կարդա Աղայեանցի «Յարութիւն» և Մանուկը գիրը. Նա ձեռքդ բռնած՝ քեզ կառաջնորդի գեղի եղբայրսիրութիւն գիրը. Նա ձեռքդ բռնած՝ քեզ կը ծանօթացնի մեր աշխարհի հետ՝ բնական ու կրթութիւն. Նա քեզ կը ծանօթացնի մեր աշխարհի հետ՝ բնական հերոսներով, նախնաւանդ սովորութիւններով . . . Նա կը կրթի քեզ, կազնուացնի միտքդ, խելքդ, խիղճդ և գու կզգաս այդ ամեն փոփոխութիւնը, Կարդա Պոռշեանցի «Հացի ինդիրը». Նա քո առաջեւ բաց կանի քո հայրենի աշխարհը իւր լաւ ու վատ կողմերով, ուր երեմն բեգերն ու մովորովները խեղճ Հայերի արիւնը ծծելիս են եղել. Հայաստան աշխարհի հողը մշակել, իսկ հայը. Հայը սարեր ու ձորեր է չափել իր օրական ձեռք բերելու և գեռ չափումէ . . . Եւ պյապիսի ինքնուրոյն գործերը մեր մէջ ինչի չեն գնահատվում, չեն փանդվում առշեւե՝ վատերը, անպիտանները չեն պատժվում, չեն փանդվում ապարիզից . . . Ընդհակառակը՝ մեր մէջ աւելի հրատարակվումն եւ կարգացվում վերջինները, որոնց բովանդակութիւնն է՝ կիրք, զրպարտութիւն, թշնամութիւն, անձնաւորութիւն. Լրագրական յօդուածների հրատարակութեանց ճշտութեան մասին էլ նոյնը պէտք է ցաւելով խոստովանել. լրագրական հերքումները մեզ զզուացըել են . . . Կը նշանակի, ասումեն ուրիշները, կեանքը շարժման մէջ է. բայց ես կաւելացնեմ, որ հայերիս կեանքը գեռ բայց հայտնի չեն ազատուել. դեռ ճշմարտութիւնը բարեկամներ շատ չունի, գեռ ցեցերը գափումն բարեիդիզ մարդկանց սիրալը:

Եւ մեր ակնարկած կեղծ, ասենք հէնց ճշմարիտ (?) հեղինակները իրենց վնասակար աշխատութիւնը լոյս ածելու համար զրամի պակասութիւն ունենալով՝ իսկոյն յայտարարութիւններով լրագրի ընթերցողներին ձանձրացնումեն. մէծ և ծանր գործ երեցնելով իրենց աշխատասիրածը՝ բաժանորդական ստորագրականներ, են ուղարկում ամեն կողմերի վերայ զանազան մարդկանց հասցեով և այդպիսով ժողովումնեն ոչ թէ այնքան գումար, որ տպագրական ծախքը լրացներ միայն՝ այլ և աւելի. Այս ճարպիկութիւնը մեծամեծ վնասներ է պատճառում և այլ բարենպատակ գործերին. նուիրատու մարդկանց դրեթէ ձանձրացնումնեն դըռներ իրենց ստորագրական թերթերով . . . Այս յիշելով, ես չեմ մեղանչում բարեմիտ նուիրատուաց առատաձեռնութեան գէմ. բայց երբ նուիրատուն իշխէլուն է իր նուերքը տալիս, երբ անդիտակցաբար է ստորագրվում և չէ հասկանում ինչի համար, ո՞վ է հեղինակը, արդեօք արժանի՞ էր կանիիկ փող տալ մի այնպիսի գրքի հրատարակութեան համար, որը վերջում դուրս է գալիս վճարողի քմաց հակառակ և վնասակար—այս դեպքում տուրքը ես համարում եմ

կորուստ և չարեաց պատճառ, որ ցաւելու և ափսոսալու իրաւունք ունիմ միայն—ուրիշ ոչինչ։ Առաջ պէտք է ձիշտ հասկանալ ուրիշ էռունիւնը, ապա օգնել նորա յաջողութեանը և ոչ կուրօրէն, խաթրիչուն տալ, ապա ցաւել կամ հենց անհոգ մնալ... Բարեկամ մարդկանց ձեռքով ընդհանուրից փողեր ժողովել և գրուածքը եթէ ստացած գումարի գոնէ արժէքը չունենայ՝ թողնենք աշխատանքը, կորցրած ժամանակը— ես այդ եղանակին կանուանեմ — էրւունիւնը մնադրունիւնն մէջ է ուրիշ շահաւանաւնիւնն ներ...»

Բայց ի՞նչ անես՝ քաղաքավարի ասա, սիրով խորհուրդ տուր, միանգամ էլ թէկուզ մարակիր—բաւական չէ. անպատճառ պէտք է նոյնը կրկնել, կրկին կրկնել, գարձեալ կրկնել, էլի կրկնել և այսպէս անվերջ, մինչեւ որ մի կողմից Հայ—հասարակութեան թմրած ուղեղը զգաստանար, իր խէրն ու շառը ձանաչէր, ժամանակիս պահանջներին գիտակցարար հետեւէր. միւս կողմից ոչունպէր չուռէին՝ չու դւեւի ունե...»

«Նեղութիւն կրեցէք ձեռք բերելու, պարօններ, վերջումն լոյս տեսած դրբերից և գուք ինքներդ ձեզ ձանձրացնողի իսունը կը ստուգէիք. իսկ ես այժմ գառնամ զէպի մեր քննելի առարկան։

«Էջմիածինը և Հայաստանի սովը» գրքոյկի հեղինակը, ինձ թվումէ, որ թագ է կացել կեղծ անուան քողի տակ. կեղծ ստորագրութեան գիմողը պէտք է վախլուկ լրտուրա լինի, մանաւանդ այն գեղքում՝ երբ զրուածքը զանազան անձնաւորութեանց դեմ է. Արմենակ Սիւնին Հարուածել, վայր է ձգել մարդկանց պատիւը և կեղծ ստորագրութեան գիմել, աշխատելով ծածկել իր ո՛վ լինելը. Պատուաւոր մարդիկ այդպէս չեն վարվում. Նրանք զիազումեն մարզի պատուի, խայտառակում, ապտակում նորան և միենդյն ժամանակ կանգնում հակառակորդի առջե՝ ասելով. «ինձ տեսնում ես, մարակողդ ես էիս. Արմենակ Սիւնին վեհանձնութեամբ պէտք է յայտնէր, չուրանալով իր սեփհական աղդ՝ անունը՝ նա մանաւանդ որ իր իսունը. հրաշուշ ընդհանուր Հայոց հոգեոր ներկայացուցիչների, Ա. Էջմիածնի գործունեութեան զէմ՝ լինելով՝ պէտք է շարժէր ընթերցողների միաբն ու սիրտը և իր սեփհական ստորագրութիւնը շատ թէ քիչ երաշխաւոր լինէր գրուածքի իշտ՝ հազ ծլարդունիւն...»

Գրքոյկի վերնագրից իսկոյն կարելի է հասկանալ նորա բովանդակութիւնը, մանաւանդ եթէ ի նկատի առնեինք թեթևառուիկների դէպի Էջմիածինն ունեցած ծուռ գաղափարը և այն՝ որ Թիֆլիսի գրաքնական—ցենզօրական ժողովը երևի արգելելուց յետոյ՝ նա տպուել է բարձրուցյն կառավարութեան թոյլտվութեամբ։

... Սիւնիի գրուածքը ինքնուրոյն բան չէ. նա ձեսնաձիգ է եղել իր գրքոյկի նիւթերը այս ու այն պարոններից ժողովելու. ուրիմն և ար-

դար բարկութեամբ (?) է հրատարակել գրքովիը, ըստ որում՝ երբ օձիքից բռնելու լինեա, կը մեղադրի նիւթ տուողներին ... Ի՞նչ եղանակով, ի՞նչ մարդկանցից է նա նիւթերը ժողովել—ի՞նքն ըստ ինքեան էլ յայտնի է, ով չը գիտէ, որ չարայովզ, վրէժխնդրակ մարդիկ նպատակներին հասնելու համար իրենց նմաններին են դիմում....

Նիւթերի ժողովածուի բարդ անուանական ցուցակին մի առ մի պատասխանելը մեղ իրաւունք չը համարելով՝ ըստ որում Արմենակ Սիւնին սարսափելի կերպով արատաւորումէ Էջմիածնում գործող անձանց՝ անուանելով և իր խօսքերը՝ որպէս թէ հաստատելու համար անյայտադրիւներից սքողուած օրինակներ է յառաջ բերում մատեմատիքական կարգով. մենք թողնենք այդ ամենը, ասումեմ, բռնենք միայն երեք կէտից, որոնցով նա ամեն մի լրջամիտ ընթերցող հայի ձեռքը զէնք է տալիս իր գէմ, Այդ պարոնը իր գրքոյկի նախերդանքի մէջ զինք է տալիս իր գէմ: Այդ պարոնը իր գրքոյկի նախերդանքի մէջ իրեն իրան ամենազատամիտ համարելով՝ մէծամեծ արժանաւորութիւններ է երազում իր մէջ և կարծես հայ-հասարակութեան կողմից ևս ծափահարութեան սպասում, ինչպէս կը տեսնէր անշուշտ «Աշակի» յարգոյ խմբագրից: Պարզենք նորա նախերդանքը —

« Կախազանի վրա անարդ մահով ինձ պատժելիս էլ լինին, էլի մինչև զերջին բռպէն ազատ կը խօսեմ. բայց թող որ անօրէնը (?) իր կը բերին անպաշտպան անձս զոհէ, այնու ամենայնիւ իմ նշանաբանն է լինել հեղ զինուոր ճշմարտութեան »:

Այս կանխագուշակ մարդարէական միտքը կեղծ Արմենակը ողբերգական ստանաւորով գուրս է բերել, որի ինկական առղերից ձանձրակ գարշահոտութիւն է բուրում.... Վորանից իսկոյն կարելի է եզրակացնել որ պարոնը և վախեցնում է, և՛ վախում՝ պոչը շէքը կոխում.... Նա կարծես չէ հասկանում՝ որ ժամանակին տիրողը տասն և իններօրդ դարն է: Ինչ ասել է՝ « եթէ անօրէնը անպաշտպան անձս զոհի... ճշմարտութեան հեղ զինուոր... Կախազանի վրա անարդ մահով պատժ... մինչև զերջին չունչը ազատ խօսել... » Այլ է անօրէնը, ի՞նչ պէս, ի՞նչ գործերում. ճշմարտախօսին ո՞ր անօրէնը կարող է պատժել, ի՞նչ բանից է երեսում ճշմարտութեան հեղ զինուոր լինելդ. ափսոն ճշմարտութիւն, որ յաղթահարվումէ քեզպէսերից և ոչ բացատըրվում... Ես բոլորովին չեմ տարակուսում՝ քեզ այդ կերպ ցոյց տալու դմասին. ըստ որում՝ դու այնպիսի արժանաւորութիւններ ես երազում քո մէջ, որ թերեւս չեն ունեցած երեսի հանրահոչակ մարդիկ՝ Ժան-Ժակ-Բուսո, Քիսմարկ, Ըիլլէր, Գեօմէ, Բիկոնս—Փիլլ....

Ճշմարտութեան զինուոր, ողորմած Տէր, ոչ թէ միայն սխալ է ենթագրութիւններդ և ցնորք, այլ և մեծ մասամբ հնարովի են նիւթերը. գլուխդ փչել են մարդիկ՝ դու կանխատես չես եղել. որպա մեղն էլ հանգամանքինն է՝ որ քեզ չէնց զիս ի՞նչ հասակիդ մէջ մարդկութեան ան-

բարեացակամ ճշմարտութեան գիրկն է ձգել... Եթէ քեզ, ինչպէս կամ, քո տեսակէտով քննելու լինեինք, արդարեւ, կանխագուշակ նախերդակիդ իմաստը պէտք է կատարուէր. բայց արի ասենք միայն, որ ունի շուրջ ճշմարտութեան մարտկոցի զինուոր դառնալը հինգ րուբլով գնել, Արարատ ամսագրի համար նորուոր անուներ սուբդել ուշ, գաղիական առածներով գրուածքը շուրջ-բել երկու բաժնէն ինչ-չո՞: Արդեօք այդ առածների բառացի իմաստը դու կարողանումես ըմբռնել—անհաւատալի է: Հիմնովին անհաւատալի է նաև, քեզանից 300 վերստ հեռի տարածութեան վրա կատարվող թէ կատարուած երեսյթների նկարագրելու, որոնց ոչ մէկին դու ականատես չես եղած և ոչ մօտիկից ականջալուր եղած: Հենց ասենք թէ՝ ականջներդ խիստ սուր են, բայց ամեն լսած խօ ճշմարտութիւն չէ: Աւրեմն՝ ես էլ կուրօրէն պէտք է հաւատամ և հաւատացնեմ ուրիշներին այն ամենը՝ ինչ որ լսել եմ քո մասին: Եթէ ասեն որ՝ գու, պարօն Արմենակ, օրինակ խիստ անբարոյական ես, չափազանց շոպլ ես, կեղծաւոր ես, գատարկաշրջիկ ես, անսխալ զրել ըլ դիտես, գրուածքդ ուղղել ես տալիս, տառայլին կոմիտե—ի արժանաւոր անդամներից մինն ես, մի խօսքով, ամեն տեսակ կեղտու խօսքերով քեզ ներկեն, հարցնումեմ՝ ես էլ հաւատամ, ժողովածուի մի մասեան կազմեմ և այսպիսի նախերդանքով էր զարդարեմ ճակատը.

Դուրս եկաւ մէյդան սարսաղի նման,  
Անկիրթ, կիսակիրթ, այս յիմար տղան.  
Աեանքիս խնամի՝ ձեւացաւ փրկիչ:  
Սրվեց ու շարժեց սգաւոր գրիչ...

Ես իր շուրջ կեանքը, իր յատուկ դէմքը  
Ռածկեց քողի տակ—դրեց դիմակը.  
Եւ այդ կեղծութեամբ գոռաց գրաւոր—  
«Ես եմ ճշդութեան մի հատիկ զինուոր...»

Եւ այս նոր-անուն տղան խիստ գողտրիկ  
Եղաւ թարսութեան զինուորը հեղիկ.  
Աւրիշ նիւթ առնել, զրել չկարաց,  
Էջմիածնի դէմ մոնչաց, գուաց....

Փախիր, ընթերցո՞ղ, սորա հոսանքից,  
Ամեն ինչ կոծում, լափում է տակոից.  
Պոտէ- ասածդ խիստ փոյթ չէ նորան,—  
Քանի նա պատուի է իսկ անարժան...

...Կարծես ամեն բան նոր է ընթանում,  
Եւ ամենայն ինչ նորուից սկսվում.

Ամեն մի անփորձ, անմիտ բանախօս։  
Երկուումէ մեզ հշուա-թեան հեքու-!?-?

Գառնանք երկրորդ կետին: —  
Արմենակ Սիւնին իր գրքով կի առաջին երեսում Ա. Էջմաննէ, հայա-  
տանցի սովորուկ ժամանելու ու մի բառերներն պատկերները, շատ թէ  
դումնանութեամբ, նկարով դուրս է բերել տուել, որոնց տակ կար-  
դումնանք չետեեալ ու տողերը: —

• Սովորելու, մի կառը հաց...

## Պատասխանը

— **Бу** *бънъ* *вънъ*, *зънъ* *зъгълъ*...

Արդեօք ուղիղ է շեշտած խօսքը—հեռացէք, ոչ ես եմ լսել, ոչ դու-  
կ ոչ մի այլ ոք, որտեղից է ուրեմն առել Արմենակ Սիւնին այդ ան-  
հեթեթ խօսքը, . . . Հապա ո՞վ էր այն միջոցին 3—4000 ից աւելի սովալլուկ  
գաղթական հայերին տեղաւորում, խնամում, հազցնում, կերակրում,  
որոնք նուաճեալ երկիրներից թափուել էին Աւաղարշապատ։ Այդ խօս-  
քը ո՞չ թէ միայն սուտ է, ինչպէս նորա գրքով ամբողջապէս, այլ և  
անբնական։ Խսացէք ինդրեմ, թող նա Յ. Էջմիածին չը լինէր, թող  
նա ընդհանուր հայոց ողորմածասիրտ Հայրապետ ևս չը լինէր, այլ մի  
հասարակ մարդ՝ որ միջոց ունէր օգնութեան ձեռք կառկառելու՝ չէր  
խղճալ, չէր օգնիլ թշուառ, անպաշտպան զոհերին, որոնց գլխին մա-  
հուածարած հրեշտակն էր պտտում, քանի որ այն միջոցին սար-  
դուան թեատարած մերժակն էր պտտում, քանի որ այն միջոցին սար-  
դուան մերժակն էր պտտում, մեր սիրտն են . . .

Պ. Սիւնին արդեօք գէթ մի անգամ սյցելե՞լ է իր ակնարկած հպյաստանը՝ կամ սովալլուկների երեսը տեսե՞լ է, որ նրանց շնորհակալութեան աղաղակները աջ ու ձախ կողմից իր խուլ ականջները ծակծէին թեան աղաղակները աջ ու ձախ կողմից իր խուլ ականջները ծակծէին թափեոր տէր մեզի փրկեց, պախպանեց, խաց տվաւ, օգա տվաւ, անոր « խոգեոր տէր մեզի փրկեց, պախպանեց, խաց տվաւ, օգա տվաւ, անոր թախտը շէն մնա՛ ... »

Եւ Արմենակ Սիւնին իր տղայտկան ցնորքներին որպէս վկայ բերում  
։ Մշակ՝ լրագրում տպագրուած անցեալ կեղծամիտ յօդուածները եզ-  
միածնականների դէմ։ Այդպէս էլ պէտք է լիներ. Ի՞նչ վհան եւ բնեան էլ  
+ իշխան... Այս մեծ գրական ? սիրագործութիւնից յետոյ՝ պ-  
Սիւնին մի բան մռուացել է յիշելու, ինչ եմ ասում, քիչ է մնում որ  
նա պարզապէս բացականչի՝ եզմիտծինը տասն և իններորդ դարի

մարդկութեան ղասարիսանոցի գերն է կատարում։ Այս խօսքն է բառացի պակասում՝ իր գրքոյնի մէջ. և ով գիտէ՝ գուցէ նա անկիւներ ում իր նմաններին այդպէս էլ լինի քարողելիս . . . Մի և նոյն ժամանակ պ. Արմ. Սիւնին այն ևս խոստվանումէ իր գրքոյնի մէջ, որ ինքը եցմիածնի բարեկամն է, ամենահարազատ շահուն է, ուրին է։ Այդպիսի մի որդու լայն ճակատին լրջամիտ մարդիկ չէին խնայիլ մի մեծ գիւղ-մեխ ցցել, որ նշան լիներ նորա ծշմարտութեան զինուոր լինելուն . . .

Տեսա՞ր, ազնիւ ընթերցող, որ Արմենակ Սիւնիի պէս մարդիկը յուղայական ցնորդներին բարեկամ լինելով՝ ի՞նչպէս ձեռնաձիգ են լինում վնասակար, ամրոխը գոգոսղ, անհիմն հրատարակութիւնների լոյս ածելուն, որից իսկոյն և եթ պէտք է ազատել մեր մասունքի գրականութիւնը մասունք եմ առում, ըստ որում՝ այդ խեղճին ինչ էլ դաս, ձեռքը գեմ կանի, զիրկը բաց . . . Այդպիսի գրքերում արտայայտած մուլար կարծիքներն ու մոքերը մեր միամիտ հասարակութեան ամրող զութեան մէջ բաժանումն ձգելու պատճառ են դառնում, ընթերցողի խաղաղ տրամադրութիւնը խառնում, մինը միւսին վնասելու ցանկութիւնները գոգոսում . . .

Մի մարդ՝ որ կարող է իր ընկօր և առհասարակ ազգային զանազան հաստատութեանց ներկայացուցիչների պակաս կողմերը երեան հանել աւելի քաղցր, հաւատքն աւելի շարժող, աւելի համոզիչ խօսքերով, ի՞նչ է պատճառը, որ անշուշտ հակառակն է գործում, յարձակողական զիրք բռնում և անարդ հայհոյանքի մի տոպրակ բաց թողնում գեպի մարդկանց պատիւը, գեպի լուսաւորչեան պատմական Արբավայրը, գեպի սորա անիսոնց, զիշեր և ցերեկ հայի օգտին վրա մտածող, Կերկայացուցիչները . . .

Ենթադրենք, որ մեր . . . Սիւնին այդքան խոչեմութիւն չունեցաւ, և միթէ այդ Կերկայացուցիչները, նոյն իսկ Վեհափառ հայրապետը ազգաշահ գործեր, լաւ կողմեր չունեցան, որ նրանց ևս բարեհաճէր համեմատաբար լոյս ընծայել. — Կ'նչ արդիւնք, ի՞նչ գնահատութիւն կարելի է սպասել այդ կերպ վարմունքից. աւելի վատ և աւելի վնասակար . . .

Աչա թէ ի՞նչի պէտք է կտրել, սղոցել ընդհանուրիս համար վնասակար ձեռքը. ի՞նչի՞ պէտք է ցաւելով յիշել գաղղիական առածը — Non multa, sed multum. լաւ է ունենալ սակաւ—բայց ընտիրը, քան շատ—յիմարը, վնասակարը, որոնք կրիտիկայից անգամ ստոր են . . .

Եթէ պարոնը Վեհափառ Հայրապետի աղգաշահ գործունէութեան մասին բոլորովին տեղեկութիւն չէ ստացած մինչեւ օրս և որովհետեւ նորա գրքոյնի առաջին երեսից երեւումէ, որ նա գարձեալ գրքոյն է թողնելու եցմիածնի ներկայ վիճակի մասին,—ապա թող բարեհաճէ հետեւալ նիւթերին ևս տեղ տալ իր ապագայ գրքոյնի մէջ, որոնք են՝

1. Ճեմարանի հաստատութիւնը՝ ազգային հողի վերայ — իր ընդունակ նշանակութեամբ:
2. Գրադարանի հաստատութիւնը և հարստացնելը՝ Հայոց գրադարանական ամենահին յիշատակները ձեռք բերելով . . .
3. Թանգարանի հաստատութիւնը՝ գարձեալ ազգային հնութեան նկատմամբ:
4. Թանգարանի ապահով պահպանութեան համար Ա. Էջմիածնին պատակից հոյակապ շենքը . . .
5. Գէորգեան անտառ՝ Ներսէս Եղիշի անտառին կից:
6. Սկզբունք թեմական վերատեսչութեան:
7. Թեմական վերատեսչութեան իրաւանց հաստատութիւնը և գործունէութեան հետեանքները:
8. Աւումնարանների առատութիւնը, ուսուցիչների գնահատութիւնը և ինամատարութեան սուրբ սկզբունքները:
9. Էջմիածնի աղքատ գանձարանը հարստացնող կանոնաւոր աղքարների հաստատութիւնը:
10. Զեռքից դըեթէ խլուած՝ զանազան վանքերի ու անապատների կալուածոց, անտառների, շենքերի, կրպակների նորէն ձեռք բերելու միապահութը, և նոցա կառավարութիւնը կարգ ու կանոնի տակ գնելը:
11. Զայնագրութիւն — ազգային և եկեղեցական բուն նշանակութեամբ:
12. Հոգեորականութեան ընդհանուր կարգադաշութեան մասին բազմաթիւ կանոնական կոնդակներ, արտաքին ու ներքին կերպարանափոխուներ . . .
13. Ա. Յ. Եւ այլք: Յուսանք և սպասենք:

. . . . Ես վճռեցի. գրասեղանս ազատել Արմենակ Սիւնիի ։ Էջմիածնինը և Հայաստանի սովոր ։ վերնագրով անհեթեթ գրքակից: որի առիթով գրեցի սղյնը . . . բայց տպագրել սորան, ոյդ կահուած է Արարատ ամսագրիդ . . . խմբագրութիւնից:

Ա. Պ. Ա.